

չունին. անտեղ հարսանիքը, իւր նահապետական պարզութեամբը, վեց-եօթեօր է տեսում: Բնութեան այդ գեղեցիկ գողում սէրն էլ բոլորն է և վեհ: Անտեղ սիրող սրտերը, եթէ խոչընդոտների են հանդիպում, իրանց զուլիւր մահու են մատնում անխռով ու անտրտունջ: Եւ իրաւ, գրքովի հերոսների՝ Սմբատի ու Մարգարտի սէրը աննման է: Տեսարանները, մանաւանդ զընայով վերջը, անքան սրտաշարժ են, որ դժար է արցունքը բռնել: Սըրտաշարժութեան կողմից կարելի է համեմատել այդ վէպիկը «Կարմէն Սիւլվա»-ի (Ռումինիայի թագուհու) գողտրիկ վէպիկների հետ:

Ցաւալի է միայն, որ լիզուն (չեմ խօսում տեղական բարբառի մասին) վերին աստիճան անմշակ և զուրկ է քերականական տարրական կանոններից: Օրինակ՝ «Նոր-Բալագէտը, որ պարծենում է իւր հովասուն օղով և առողջ ջրերով, ահա խաչերի ջրերն են միւս բազմաթիւ աղբիւրների մէջ առաջին տեղը բռնում, որ ստորերկրեայ խողովակներով ճիւղաւորուած ցրում է քաղաքի մէջ և այլ տեղեր» (եր. 129): Մարդ մնում է շարւած: Գլխաւոր նախադասութիւնը, միջանկեալով ընդհատուելոց փառոյ, չէ վերջանում, սկսում է նոր գլխաւոր նախադասութիւն: Անուն բալին լոգնակի, բալը եղակի դրած և այլն. համաձայնութեան (syntaxe) հոտն անգամ չը կալ: Մատենագիրը չը պիտի գուհկացնէ իւր լիզուն. ընդհակառակն, նորա ուղղակի կոչումն է՝ ժողովրդին կանոնաւոր լիզուի՝ ընտելացնելով՝ կանոնաւոր մտածելու վարժեցնել:

Յ. Լ.

«ԸՆՏԻՐ ՀԱՏՈՒԱԾՆԵՐ» (Քրեաթումաթիայ). Հայ դպրոցների համար: Ա. մասն.—Արձակ. երկրորդ տպագրութիւն (հարիւր նոր հատուածով). յօրինեց Յովհաննէս Նաղարեանց. Թիֆլիս: Տպարան Մարտիրոսեանցի, 1889 թ. 504 երես., տառ № 12, գինն է 1 ր. 25 կոպ.

Գրքիս յօրինողը կամ առաւել ճիշդ ասելով՝ կաղմողը, արդէն ծանօթ է մեր գրականութեան մէջ իբրեւ հեղինակ հակելն լիզուի դասագրերի: Անծանօթ չէ մեր մանկավարժներին պ. Նաղարեանցի ալս գործը, որի երկրորդ տպագրութեամբ լոյս տեսնելն արդէն մի առանձին գնահատութեան նշան պէտք է համարել, թէ և առաջին տպագրութեան ժամանակ (1883) պ. յօրինողը անպիսի հռչակահար միջոցների չէր դիմել, ինչպէս այժմ: Զեկուցողիս կարծիքով, աւելորդ էին գրքի սկզբում հրատարակւած երկու նպատաւոր քննադատութիւնները: Եթէ վեց տարի առաջ ալս գիրքը ոչ մի փառաբանող լալտարարութեան (ռէկլամ) կարօտ չէր, անշուշտ նրա երկրորդ և ստաւարացրած տպագրութեան համար այժմ առաւել ևս աննպատակ են մի մանկավարժական ժողովի և կամ մի սոսկականի կարծիքը: Ընտիր հատուածները մի ժողովածու են դանաղան աղղալին և օտար մատենագիրների



գրածներին քաղած լօղածներին, որոնք դասաւորւած են մատենագրութեան տեսութեան որոշած բաժիններին համաձայն: Այսպիսի հատւածներ ժողովածուներ շատ կան օտար մատենագրութեանց մէջ. սրանք գործ են գրուած դպրոցներում (ոչ ժողովրդական, այլ միջնակարգ), իբրեւ դասագիրք լեզուի և նախաշաւիղ մատենագրութեան տեսութեան և պատմութեան և կոչւում են Chrestomathie (քրեստոմաթի), լոնարէն քրիստոմաթէիա խօսքով, որ կը նշանակէ ժողովածու ընտիր հատւածներին. ինչո՞ւ ուրեմն քրիսթոմաթիա և ոչ՝ քրիստոմաթի:

Այս երկրորդ տպագրութիւնը Ընտ. հատ.-ի ձեռագրած է և փոփոխած. մանաւանդ փոփոխւած է լօղածների կարգը. բացի դրանից, ունի և երկու մեծ լաւելած գրքի սկզբումն՝ «Տեսութիւն գրականութեան» եր. 18—43 և վերջում՝ «Գրաբար լօղուածներ» եր. 489—504:

Ընտիր Հատուածների գլխաւոր բաժիններն են. I. Նկարագրութիւններ. 1) Բնութեան երևութներ, 2) Աշխարհագրական (ա. ֆիզիքական, բ. ժողովրդագրական), 3) Ճանապարհորդութիւններ, 4) Նամականի, 5) Հանդէսներ, 6) Պատկերներ, 7) Զուգակշիռ, 8) Խորհրդածութիւններ. II. Վիպասանական հատուածներ. 1) Վարքագրութիւն, 2) Կենսագրութիւն, 3) Ինքնակենսագրութիւն, 4) Ժամանակագրութիւն, 5) Յիշատակարան, 6) Պատմութիւն, 7) Փիլիսոփայութիւն, 8) Հոգևոր պերճախօսութիւն, 9) Հատեր, 10) Դասախօսութիւններ, 11) Հովուական. ընդամենը 167 լօղած, իսկ 168-երորդը, որ կոչւում է «Խաչ օգնեմ ինձ (Պ. Մուրադեանց)» չը կազմէ գրքում, թէև ցանկում նշանակւած է: Գրաբար հատւածների թիւն է 24, որով հատւածների թիւն ամբողջապէս կը լինի 191. մինչդեռ առաջին տպագրութիւնն ունէր 145 հատած, այսինքն երկրորդ տպագրութեան մէջ աւելացրած են ոչ եթէ 100, ինչպէս գրքի երեսունն է տպած, այլ միայն 46, չը հաշուելով գրականութեան տեսութիւնն և երկու լանձնարարական քննադատութիւնները, որ եւրոպական հրատարակութիւնները գրքի չափարարութեան (Prospectus) մէջ են տպում:

Այն մատենագիրներն, որոնցից հատւածներ են հանւած, բաւական րազմաթիւ են. աղբյւրն՝ մատենագիրներից շատ սակաւն են պակաս, օրինակ՝ Պռօչեանցը. դրա փոխարէն կան աչնպիսի գրողներից հատւածներ, որոնք անծանօթ են և որոնցից բերած հատւածներն լաւ կը լինէր թողնել, քան թէ տպել (տես. լօղ. 75):

Թարգմանական հատւածների լեզուն շատ անմշակ է. օրինակ, կարդում ենք. «տանում էր ուռած ջրերը», «ջիղ» (նեարդ), «սովորութիւն» (սովորութիւն), «ֆիզիքական» (քնական), «չեմ համարձակի (շ) մտածել», «թիֆլիզի հալերն աչքան նմանեցրին իրենց վրացիներին», «պատմողական», «տեղաւորութեցաւ նստարանի վերաջ» և այլն և այլն: Տեղիս սղութիւնը չէ ներում շատ օրինակներ բերել: Զարմանալի է, որ պ. յօրինողի աչքից փախել են ֆ. Վարդանանի դեղեցիկ թարգմանութիւններն, որոնցից աւելի ընտիր օրինակներ կարող էր բերել:



Ընտիր Հատուածները մանկավարժական, գրական նշանակութեան և նրա կազմակերպութեան մասին խօսելն մեր նպատակը չը լինելով թողնում ենք այդ մի ալ առթիւ, իսկ գալով «Տեսութիւն գրականութեան» կոչւած բաժնին, քանի մի խօսք կ'ուզէինք ասել:

Պարոն չորինոզի «Տեսութիւն գրականութեան» կոչւած բաժինը ամբողջովին թարգմանութիւն է և կամ մեղմօրէն ասելով՝ փոխադրութիւն է ռուսերէն «Учебная Теория Словесности.» Н. Минина. С. П. 1881. գրքից, որից հանած է տաղաչափութեան վերաբերեալ կտորը միայն, Զեկուցողիս կարծիքով, պէտք էր նախ՝ աղբիւրն վիշել և երկրորդ՝ աւելի մշակել այդ բաժինը, աչքի առաջ ունենալով և ալ այդ տեսակ գրքեր և ոչ թէ միայն մի գրքից թարգմանել, որի տեսութեան հիմնական գաղափարներն վիճելի են:

Վերջացնելով մեր ղեկուցումը Ընտիր Հատուածների մասին, պարտք ենք համարում լանձնարարել այս գիրքը մեր հայերէնի ուսուցիչներին, որ իւր առատ նիւթով շատ օգտակար կարող է լինել դպրոցներում իբրև մատենագրական ճաշակ զարգացնող և շարադրութիւններին ուղղութիւն տուող առաջնորդ:

Ք.

ՆԻԻԹԵՐ ԱՆԴՐԱԿՈՎԱԿԱՍԵԱՆ ԵՐԿՐԻ ՊԵՏԱԿԱՆ ԳԻՒՂԱՑԻՆՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ. Հրատարակութիւն Պետակ. կալաժները Մինխտորի հաւատարմատար կովկասում—Ի. Ի. Տիխէէւի. Թիֆլիս, 7 մեծագիր հատորներ, 2-ժալ, բոլորը միասին 5525 եր. տառ № 12.

Այս նշանաւոր հրատարակութիւնները պատկանում են մեր դարու ամենանշանաւորներին՝ Անդրկովկասի վերաբերեալ Նոքա մեծ դեր պիտի խաղան մեր երկրի գիւղական կեանքին վերաբերեալ գրականութեան ու օրէնսդրութեան մէջ: Նոքա զուրկ չեն թերութիւններից, բաց քննադատել նոցա ամբողջութիւնը դեռ. ևս անհնարին է: Մեր առաջին պարտականութիւնն է ծանօթացնել նոցա բովանդակութեան հետ, որը չափազանց հարուստ է: Այդքան հարուստ նիւթի հետ ծանօթացնելու ամենալարմար միջոցն ենք համարում՝ ուղղակի դնել ընթերցողի առջև գրքերի բովանդակութիւնը, չառաջաբանը, հրահանգը և ծրագիրը, որով հաւաքւած են նիւթերը: Այս անգամ տալիս ենք չառաջաբանի և բովանդակութեան թարգմանութիւնը, թողնելով միւս անգամին ծանօթացնելու հրահանգի և ծրագրի հետ:

Յ Ա Ռ Ա Զ Ա Բ Ա Ն.

Անդրկովկասեան երկրի հինգ նահանգների (Թիֆլիսի, Գուլիսի, Երևանի, Գանձակի և Բաքուի) տէրունական ընակեցրած տեղերի տարածութիւնը ճշդութեամբ չափւած չեն, բաց, մօտաւորական հաշւով, նոքա